

ԱՄՓՈՓՈՒՄ

ՈՒՂՂԱՆԿԻՒՆ ՍՐՔԱՐԱՆՈՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹԵԱՆ

Ուղղանկիւն սրբարանով հայկական եկեղեցիները զիչ ուսումնասիրուած են գիտական գրականութեան մէջ: Մանօթ էին միայն փարպիի եւ Բիւրականի օրինակները: Վերջին ժամանակներու պրպտումները Երեւան քերին ուղղանկիւն սրբարանով զանազան տիպի քաղմաթիւ տաճարներ: Հեղինակը նկատի կ'առնէ նախ Արագիւղի Ս. Աստուածածին եւ Բիւրականի Ս. Յովհաննէս եկեղեցիները: Ապա կ'առնէ ուղղանկիւն սրբարանով միանաւ եկեղեցիներուն վրայ, որոնք կը գտնուին Անի, Մարց, Ախթալա, Տաթեւ եւ Արցախ: Ինչ կը վերաբերի եռանաւ քաղիւղանկիւն, թէեւ ուղղանկիւն սրբարանով մեզի ծանօթ նմոյշները ուշ ժամանակի մը կը պատկանին, բայց անկասկած ատոնք վերամշակումներ ըլլալու են հնագոյն կառուցուածքներու: Արցիի Ս. Մարիամ եւ Իրանի ինչ ինչ նմանօրինակ եկեղեցիներուն մէջ սրբարանը իբրեւ շարունակութիւնը կը ներկայանայ նաեւ՝ առանց մատրիկաներու: Մինչդեռ Արտաշատի Այգեստան եւ Էջմիածնի Շահումեան գիւղի եկեղեցիներուն մէջ գոյութիւն ունին նաեւ կողմնակի երկու մատուռներ:

Հայ ճարտարապետներուն ստեղծարար տաղանդը ուղղանկիւն սրբարանը կիրարկած է նաեւ զմբեթաւոր կառուցուածքներու մէջ, ինչպէս զմբեթաւոր դահլիճը, զմբեթաւոր խաչածէ եկեղեցիները եւ չորս յենարաններու վրայ հանգչող զմբեթով կառուցուածքները:

Հուսկ Հեղինակը կ'անարկէ «Թուի մանուկ» տիպի աղօթատեղիներուն, թէեւ միջոցի սեղմութիւնը չի թոյլատրեր անոնց մասին հանգամանալից անդրադարձութիւն մը: Սակայն կարելի է ենթադրել որ ատոնք ալ կապ ունենան վաղ քրիստոնէական կառոյցներու հետ:

Եզրակացնելով՝ Հեղինակը կը հաստատէ. Ա) Այսրկովկասեան գօտին ալ, Ասորիքի, Միջագետքի եւ արեւմտեան Եւրոպայի սէս, ուղղանկիւն սրբարանով կառոյցներու մշակման կեդրոններէն մին նշած է: Բ) Հայ ճարտարապետները յանգած են հետաքրքրական եւ ինքնատիպ լուծումներու: Գ) Հայաստանի մէջ, ուղղանկիւն սրբարանով կառոյցը կիրարկուած է ոչ միայն քաղիւղակապ, այլ նաեւ զանազան տիպերու զմբեթաւոր կառոյցներուն մէջ:

ՄԻ ՔԱՆԻ ԳՐԱԽՈՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ԺԵ. ԴԱՐԻ ՆԿԱՐԻՉ ՄԻՆԱՍԻՑ

Նոր Զուղայի ԺԵ. դարի հայ արուեստագէտները միջեւ, իր արժանի ու պատուաւոր տեղն ունի նկարիչ Մինասը, որի մասին առաջին անգամ յիշել է Առաքել Դաւրիթեցին, իր Հայոց Պատմութեան մէջ:

Դժբախտաբար, այդ դրքի առաջին տպագրութեան ժամանակ, որ կատարուել է Ամստերդամում, 1669 թուին, վարպետ Մինասին վերաբերող մասը դուրս է թողնուել, եւ տպագրուել է միայն դրա երկրորդ եւ երրորդ տպագրութիւնների ժամանակ՝ 1884 եւ 1896 թուականներին, էջմիածնում:

Այս է դիտաւոր պատճառը, կարծում ենք, որ նկարչի մասին իր պատմութեան մէջ չի յիշատակել անգամ Նոր Զուղայի պատմագիրը, ինչպէս եւ այլ քանասէրներ, մինչեւ Ի. դարի սկիզբները:

Վարպետ Մինասի մասին, Դաւրիթեցուց յետոյ, առաջին անգամ լինելով, Հ. Ն. Անդրիկեանը «Բազմավէպ»ի 1907 թ. Մարտ, Ապրիլ եւ Մայիսի համարներում, անդրադարձել է մի յօդուածաչաբքով, իսկ այնուհետեւ նրան յիշել են մի շարք այլ մատուցողաններ ու արուեստագէտներ՝, քայքայ մինչեւ 1971 թիւը, այլ տեղ հնարաւոր չէր եղել գտնել նրա անունը:

Վերոյիշեալ թուին, երբ նորոգութեան էին ենթարկում ու մաքրում Ս. Բերթեհէմ եկեղեցու որմանկարները, Մինասի անունը երեւան եկաւ մի արձանագրութեան մէջ՝. իսկ վերջին տարիներում, երբ դասաւորուում էին Նոր Զուղայի վանքի դիւանները, պարսկերէն բաժնի մէջ, յաջողուեց գտնել մէկ տասնեակից աւելի դրաւոր

1. Մինասի մասին յօդուածներ ունեն Թ. Բիւրաեանը, Ա. Երեմեանը, Զ. Միրզաբեկեանը եւ այլ քանասէրներ, իսկ աւելի ընդարձակ ձեւով անդրադարձել են Ե. Մարտիկեանը իր Հայկական կերպարուեստի պատմութիւն (Երեւան, 1971) եւ Մ. Ղազարեանը իր Հայ կերպարուեստը XVII-XVIII դարերում (Երեւան, 1974) աշխատութիւններում:

2. Տես մեր յօդուածը՝ Նոր-Զուղայի Ս. Բերթեհէմ եկեղեցու մոնթաժութիւնը եւ մկարիչ Միմա, «Հասկ», ԽԱ (1972), թ. 7-8, էջ 267-270:

փաստաթղթեր, որոնք թէեւ ոչ ուղղակի, բայց պատկանում են նկարիչ Մինասին. դրանցում խօսւում էր նրա մասին:

Այս գրութիւնները թէեւ չեն պարզում Մինասի ինքնութիւնը եւ կենսագրական գծեր աւելացնում, բայց պայիս են վերջնական ձեւով հաստատելու եւ փաստելու Դաւրիժեցու ասածը, ըստ որի Մինասն եղել է մի վարպետ նկարիչ:

Այս գրութիւնները թուով 14 հատ են, որոնցից միայն չորսն ունեն թուական, որոնք կրում են 1632, 1637, 1639 եւ 1658 թուականները, միւսներին մի քանիսն եւս ունեն տառային թուեր, որոնք ցարդ հնարաւոր չի եղել կարդալ:

Գրութիւններից մի քանիսը յանձնարարագրեր կամ հաստատագրեր են, իսկ մէկ երկուսը հաշուեգրեր, որոնց քոլորի մէջ էլ յիշուում է Մինասի անունը, որպէս նկարիչի կամ վարպետ նկարիչի, որոնցով կարելի է եզրակացնել որ նա իր արուեստով, այդ օրերին, բարձր է կանգնած եղել քոլոր հայ եւ պարսիկ արուեստագէտներից եւ արքայական ու իշխանական պալատների որմանկարչութեանց վերահսկողութիւնն ու բարձր որակով դիմանկարների աշխատանքները յանձնուած են եղել նրան:

Բացի վերոյիշեալ գրութիւններից, երեք այլ գրութիւնների մէջ եւս յիշուած է Մինասի անունը, որ մեզ թւում է թէ նկարիչ Մինասը պէտք է լինի:

Այդ գրութիւններից առաջինը վաճառականական է, գրուած 1653 (1064 Հեջրի Ղամարի) թուին, ուր կարդում ենք. «Ես Մինաս վկայ» եւ կնիք, երկրորդը՝ ժառանգական մի գրութիւն է, որին եւս վկայում է Մինասը, բայց այստեղ կայ «ուստայ» (վարպետ) ածականը «Ես ուստայ Մինաս վկայ»: Այս երկու գրութիւններում եւս կան կնիքներ, որոնք ձեռագրերի հետ միանման են: Երրորդ գրութիւնը Դաւրէժ թաղի Ս. Մինաս եկեղեցու քոթուկը կամ նուիրատուների գալարաթերթիկն է, որտեղ եւս գրուած է «Աստուած արեհնէ ուստայ Մինասն, որ ետ ի դուռն սուրբ փկեղեցւոյն Բ լօ [լաւ] փանջարայ [պատուհան]»:

Հետաքրքիր է, որ այս գրութիւններից երկրորդի վրայ կայ նաեւ ոմն Աւետիքի որդի Յակոբջանի վկայութիւնն ու կնիքը, այսպէս. «Ես Աւետիքի որդի Յակոբջան վկայ եմ»: Յակոբջանի անունը յիշուած է նաեւ 1662 թուականը կրող մի այլ գրութեան մէջ, ուր յիշուում է իր վարպետ լինելը այսպէս. «Ես ուստայ Յակոբջան վկայ եմ»: Շատ հաւանաբար այս Յակոբջանն էլ նոյն նկարիչն է, որի անունը յիշատակել է Առաքել Դաւրիժեցին Մինասի անուան հետ, որպէս վարպետ նկարիչ:

Վարպետ նկարիչների անունները կրող գրութիւնները, ունեն վկայութիւնները նաեւ մի շարք այլ երեւելի անձների, խոջանների,

Դաւիթ վարդապետի, խոջայ Սարգրադի, խոջայ Յովհաննէսի եւ այլն, որով կարելի է եզրակացնել, որ վարպետ Մինասն ու Յակոբջանն եւս եղել են օրուայ յայտնի դէմքերից, որոնց վկայութիւնն ու կնիքը արժէք ու վշիռ է ներկայացրել:

Ստորեւ մէկ առ մէկ, համառօտ ձեւով, անդրադառնում ենք պարսկերէն այդ գրութեանց, տալով համառօտ քովանդակութիւնը, իսկ մէկ երկուսի լրիւ թարգմանութիւնը, նախ թուակիրներին, ապա միւսներին:

1. Մի պայմանագիր է, որով որոշւում է նաեւ նկարի արժէքը, որ նկարի աւարտելուց յետոյ վարպետ Մինասը պէտք է ստանայ: Գրութիւնը կրում է 1632 (1042 Հեջ. լուսն.) թիւը, ունի երկու կնիք: Թերթիկի միւս կողմում եւս կան հաշիւներ հին վկաների կընիքով, որոնցից մէկը հայերէն եւ պատկանում է խոջայ Սարգրագին, այստեղ կայ 1049 լուսն. թուականը:

2. Այս գրութիւնով յիշեցրւում է որ երբ «Ժամանակի հոջա-կաւոր վարպետ (օթարդէ նադէրօլասրի) հայ Ակարիչ Մինասը» նըկարը վերջացնում է նրանից ստացուի եւ ստացագիր տրուի:

Գրութեան թուականն է 1637 (1047), որ այնքան էլ պարզ չէ:

3. Սա մի վկայագիր է, որով հաստատւում է, որ նկարչապետ Միքայէլն ու նկարչապետ Մինասը միմեանցից որեւէ պահանջ չունեն: Գրութիւնը կրում է 1639 (1049) թուականը:

4. Այս գրութիւնով յանձնարարւում է, որ ըստ ազնուաշուք Նաւաբի (Սպահանի իշխանապետի⁶) հրահանգի, եւրոպական նկարներ նկարող վարպետ Մինասի³ աջուց չպէտք է տուրք դանձել եւ անհանգստացնել:

Գրութիւնը կրում է 1658 (1069) թուականը:

5. Այս գրութիւնն եւս մի հաշուեփակ է, որով յայտնում է որ, աղայէ իշաք Աղասին՝ ժամանակի հռչակուած քրիստոնեայ Մինաս նկարիչին՝ իր տալիքը, 5 թուման, վճարել է:

6. Գրուած է Մահամադ բէգի կողմից, ըստ որի «Նոր Զուղայի հայ նկարիչները եւ այլք, քանի որ... վարպետ Մինասին իրենց վարպետն ու մեծն են համարում, պէտք է որ իրենք էլ յիշեալին իրենց մեծը համարեն, նրա փօսքից ու պատուէրից ոտք դուրս չդնեն եւ հակառակ քան չանեն»:

Թերթիկի միւս կողմում հայերէնով գրուած է «Մամատ բէգին հրամ(ան)նայ բնգին ? առել է»:

3. Մինասի անունը այստեղ գրուել է «Մինու»:

Այս Մահամատ քեզը թերեւս Շահ Աբբասի նկարչապետը լինի, որի մասին յիշում է նաեւ Դաւրիթեցին, ինչպէս եւ Դոկտ. Մահամադ Հասան Ռէզուանին իր «Հոնար վէ մարդում»-ի մէջ լոյս տեսած յօդուածում (1356 (1977-78) թ., էջ 2, Հոնարէ մեհիաթ-ուրսազի դար իրան) :

7. Այս գրութիւնն եւս գրեթէ թիւ 6ի նոյն բովանդակութիւնն ունի, գրուած Մահամատ քեզի կողմից :

8. Սա մի գանգատ է Մինասի ձեռքից, ինչ որ մի հաշուի համար :

9. Գրութիւնը մի նամակ է, ուղղուած վարպետ Մինասին, որ գնաց լրացուած չէնքը նկարելու : Գրութիւնը վրում է Շահվերդի խանի վնիքը :

Շահվերդի խանն եղել է Շահ Աբբասի զօրավարներից :

10. Այս գրութիւնը մի կարեւոր վկայութիւն է Մինասի վարպետ լինելուն : Ունի չորս կնիք, երկու հայերէն եւ երկուսը պարսկերէն : Հայերէնները կարդացւում են «Սարֆրադ» եւ «Գասպար?», իսկ պարսկերէնները «Ֆարհադ» եւ «Էլիաս» :

Ստորեւ լրիւ թարգմանութիւնը .

«... [առաջին բառը մկնակիք եղել է] համաձայն ճշմարտութեան եւ քարեհամբոյրութեան ժամանակի ճշախարհիկ վարպետ նկարիչ Մինաս Զուղայեցուն, որ Զուղայի համայն նկարիչները, յիշեալ վարպետ Մինասին իրենց վարպետն ու մեծը համարելով, չպէտք է յիշեալի խօսքից ու խորհրդից դուրս գնան եւ յիշեալ վարպետ Մինասին իրենց վարպետը համարելով, նրա խօսքից ու խորհրդից... [մէկ բառ անընթեռնի] դուրս չգնան եւ խօսքը յարգեն» :

Գրութեան միւս կողմում հայերէնով գրուած է «Ուստապաշու-թեան h(o)(ւ)մայ» :

11. Այս վաւերագիրն եւս մի հրամանագիր է, որով Շահվերդի խանը գրում է Մինասին, հրամայելով որ .

«Բարձր հրաման եղաւ այն թէ քանի որ լսուեց, որ ժամանակի յայտնի վարպետ Մինաս նկարիչը, իմ գործից ձեռք է քաշել եւ ուրիշների համար է նկարչութիւն անում, եւ այն որ քարեագն վարպետ Ռեզային սովորեցնելուց անփոյթ եւ անուշադիր է, պէտք է այնպէս չանի, որ նրա համար ամաչողութեան ու անպատուութեան պատճառ դառնայ եւ նոյնպէս ? շատ ջանք եւ աշխատանք տանի, որ որեւէ պատճառաբանութիւն լսելի չլինի...» եւ այլն :

Գրութիւնը վրում է Շահվերդի խանի կնիքը, թերթի միւս կողմին հայերէնով գրուած է «Շահվերդի խանի յիւմն այ» :

می

بیت بنابر دست و منکب نفی و در المهر است و میاست نفی

جمله که جابت نقاشان بنابر است و میاست کز در استاد

و در شمس خود است و استیج و صلاح حدایر موسی لیس پرونی و زند

و استاد میاست که در است و استیج و صلاح حدایر موسی

پرونی و زند و در عرف و طالع و زنا و یتد

اعمال

حکیم علامه
 لکه چون سمیخ که مادر العصر است
 میناس نهایش دست کار لایق شده و هر دو در آن خاک
 و در باغبان لیم مالک است و در رضا نعل و کمال
 می بار که در عین کمال که باعث نجات و زینت کمال است
 اللهم عرو کوشش بدو بعد از او زنده و زود آمدن و جمع خواهد شد
 و بعد از آن نعل و کمال او ظاهر شود و در این
 این را با خیر و برهمنی خواهد بود و غرض که لایق و شایسته
 مختلف خواهد بود و در عین کمال

Այս գրութեան մէջ յիշուած վարպետ Ռեզան, եղել է Սաֆաւեան շրջանի յայտնի նկարիչներէց մէկը, որ նկարազարդել է Ալի Ղափու պալատը, Զիւլսոթունը եւ այլ պալատներ: Իր մասին յիշուած է դոկտ. Լոթֆոլլա Հօնարֆարի Գեանջիմէ ասար քարիսի Սպահան գրքի մէջ (Սպահան, 1342 (1963-64) թ.):

12. Այս գրութիւնը մի գանդատ է 40 թումանի պահանջի համար, որ վերաբերում է Մինասին եւ Միքայէլին: Նկատի ունենալով, որ թիւ 3 գրութեան մէջ սոյն անունները դարձեալ միատեղ յիշուած են, իսկ գրութիւնը շատ նմանութիւն ունի նրան, ուստի շատ հաւանաբար այս Մինասն ու Միքայէլը եւս նոյն նկարիչներն են:

Գրութիւնը զփրախտաբար զուրկ է թուականից, ժամանակը ճշտելու համար, որում հրահանգում է խնդիրը կարգադրել հայ քաւանթարի եւ քահանաների միջոցով:

13. Այս մի նամակ է, բայց կարեւոր տեղ է զբաղեցնում միւս գրութիւնների մէջ: Թաւրիղից Մահամադ Սալեհ անունով մէկը գրում է նկարիչ Մենասին, Թաւրիղ ուղարկուելիք նիւթերի առթիւ: Գրութեան միւս երեսին մի հայ՝ Միասար անունով, նոյն խնդրի առթիւ եւս, գրում է հայերէնով եւ բարեւներ ուղարկում:

Գրութիւնը կրում է Մահամադ Սալեհ քէզի կնիքը:

14. Այս գրութիւնը մի հաշուեթերթիկ է, ուր կան վարպետ Մինասի նկարած դործերի եւ պալատների անուններն ու դրանց նկարների արժէքները, որ շատ զփուլաբարեւաբար է ընթերցւում:

Գրութեան խորագիրն է. «Ժամանակի յայտնի նկարիչ վարպետ Մինասի նկարների? հաշուի գումարը»:

Նկարիչ Մինասին վերաբերող այս վաւերագրերը կարեւոր ու հաղուադիւտ գրութիւններ են, որոնց լրիւ ու բազմակողմանի ուսումնասիրութիւնը կարող է էլ աւելի լուսաբանի յայտնի նկարչի նկարչական գործունէութիւնը, որն իր ժամանակին մեծ դեր է ունեցել հայ ու պարսիկ գեղարուեստի զարգացման մէջ:

ԼԵՒՈՆ Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

Résumé

QUELQUES TEMOIGNAGES ECRITS
SUR LE PEINTRE MINAS
(XVII^e SIECLE)

LEVON G. MINASSIAN

Le peintre Minas, du XVII^e siècle, dont parle l'historien Arak'el Davrižec'i, a été longtemps oublié par la critique récente. Dernièrement, lors de la restauration du monastère arménien de la Nouvelle Djoulfa, une inscription avec le nom de Minas a été découverte; l'auteur en avait parlé dans une notice parue dans «Hask», LI (1972), p. 267-270. Ces dernières années, pendant les travaux de catalogation des archives du monastère, quatorze documents courts sont venus à la lumière, datés 1632, 1637, 1639 et 1658. Ils font l'objet de cette présente notice et sont d'un remarquable intérêt par le fait qu'ils témoignent la grande estime dont Minas jouissait à la cour et chez la haute aristocratie persane. Il était en effet le peintre officiel de la cour et était considéré comme le maître des peintres ses contemporains. La vénération que l'on portait pour son art est attestée aussi par les privilèges qui lui avait été octroyés par la cour.

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ – INFORMATION SCIENTIFIQUES

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ Գ. ՍԻՄՊՈԶԻՈՒՄ

ՄԻՂԱՆՈՅ – ՎԻՉԵՆՑԱ – ՎԵՆԵՏԻԿ

(25 Սեպտ. – 1 Հոկտ. 1981)

25 Սեպտեմբերին մինչև 1 Հոկտեմբեր 1981 տեղի ունեցավ Հայ Արուեստի Գ. Միջազգային Սիմպոզիումը Իտալիոյ Միլան, Վիչենցա եւ Վենետիկ քաղաքներուն մէջ, իբրեւ բնանիւթ ունենալով՝ «Հայ արուեստի յուշարձաններուն ծանօթութիւնը, պահպանումը, վերապրումը»:

Սիմպոզիումը կազմակերպուած էր Միլանոյի Հայ Մշակոյթի Ուսումնասիրութեան եւ Վաւերագրումի Կեդրոնին կողմէ՝ գործակցութեամբ Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիային եւ Ս. Ղազարի Մխիթարեան Ակադեմիային: Պատուոյ յանձնախումբին մաս կը կազմէին Իտալիոյ Կրթական նախարարը՝ Կուիտոյ Պոտրաթոյ, Իտալիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան Մշակութային, Գիտական ու Գիտարուեստական Գործակցութեան Բաժնին Ընդհ. Տնօրէն՝ Սերճոյ Ռոմանոյ, Գիտական Հետազոտութիւններու Իտալիոյ Ազգային Խորհուրդի Նախագահը՝ Էրնեսթոյ Քուարիարելլոյ, Իտալիոյ Աւագ Դեսպանը Սովետական Միութեան մօտ՝ Ճովաննի Միլոլոյ, Միլանոյի, Վիչենցայի, Վենետիկի քաղաքապետները, Մխիթարեան Միաբանութեան Ընդհ. Արքահայր՝ Գերպ. Հ. Պօղոս Վրդ. Անանեան, «Պանքա Քաթթուիքա տէլ Վենետիկ»ի Ընդհ. Տնօրէն՝ Վահան Բազարճըզեան եւ այլ քաղաքական եւ ակադեմիական հեղինակութիւններ:

Սիմպոզիումի Գիտական Յանձնաժողովը կազմուած էր՝ հետեւեալ անձնակազմով: Ատրիանոյ Ալփակոյ-Նովելլոյ՝ վարիչ Միլանոյի Հայ Մշակոյթի Ուսումնասիրութեան եւ Վաւերագրումի Կեդրոնին, Էրմանոյ Արսլան՝ Տնօրէն Միլանոյի Հնախօսական Թանգարանին, Ճանքարլոյ Պոլոնիելի՝ դասախօս Միլանոյի «Սաբրոյ